ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771

№ ԴԴ -1 Հ-497

«25» հունվարի 2022թ.

«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԶԱԴՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զադոյան,

Ի պատասխան Ձեր 18.01.2022թ. գրության՝ տեղեկացվում է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Սահմանադրությամբ սահմանված մարմինները տալիս են իրենց ոլորտային օրենսդրական ակտերի պաշտոնական պարզաբանումը, բացառությամբ դատական համակարգի մարմինների:* Հետևաբար, վերը նշված գրության հիման վրա ՀՀ կառավարության 03.10.2019թ. «**Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին**» թիվ 1332-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) կապակցությամբ պաշտոնական պարզաբանումներ տրամադրելը դուրս է Բարձրագույն դատական խորհրդի և Դատական դեպարտամենտի լիազորությունների շրջանակից:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 5-րդ գլխի 134-րդ կետը սահմանում է, որ *Ռազմավարության և միջոցառումների ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով պատասխանատու մարմինները յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացնում հաշվետվություն: Նախարարությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունների փաթեթը տեղադրում է ՀՀ արդարադատության նախարարության և Խորհրդի կայքէջերում:*

Նույն հավելվածի 5-րդ գլխի 136-րդ և 139-րդ կետերի համաձայն՝

136. ՀՀ արդարադատության նախարարությունը յուրաքանչյուր տարվա սկզբին, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա փետրվարի առաջին տասնօրյակը, նախորդ տարվա միջոցառումների մշտադիտարկման ու գնահատման արդյունքները ներկայացնում է ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի 808-Ն որոշմամբ ստեղծված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) քննարկմանը:

139. Գործընթացի նկատմամբ առավել թափանցիկություն ապահովելու նպատակով Ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը առանձին բաժինների տեսքով տեղադրվում են ՀՀ Արդարադատության նախարարության, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Խորհրդի պաշտոնական կայքէջում: Կայքէջերում տեղադրվում են նաև Խորհրդի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները:

Վերոգրյալից ելնելով՝ տեղեկացվում է, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես Որոշմամբ սահմանված պատասխանատու մարմնի, կողմից գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է ներկայացման բացառապես **Խորհրդին,** որն էլ իր հերթին, պատվիրակված լիազորությունների շրջանակում, Որոշմամբ սահմանված գործողությունների կատարման գործընթացի նկատմամբ առավել թափանցիկություն ապահովելու նպատակով, հրապարակում է կիսամյակային և տարեկան հաշվետվությունները: Հետևաբար, առաջարկվում է առցանց ֆոկուս խմբային քննարկումն իրականացնել առանց Բարձրագույն դատական խորհրդի ներկայացուցչի մասնակցության:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Մ. Դանիելյան
Հեռ. 511-815